ՉԱՐ ՄԱՐԴՈՒ ԼԵԶՈՒՆ

Տերեւի պէս չորանայ չար մարդու լեզուն,
Երբեք ինձ չի մոռանայ չար մարդու լեզուն։

Ես նստել եմ մեն - մենակ ու միտք եմ անում,
Ա՜խ, ե՞րբ պիտի մահանայ չար մարդու լեզուն։

Թէ ես վառեմ մատներըս էլ մոմերի նման,
Կը բամբասի անխնայ չար մարդու լեզուն։

Արծուի նման երկինքն էլ թէ ես վերանամ,
Իմ ճամբից չի հեռանայ չար մարդու լեզուն։

Կարիճի պէս սեւ թոյն է իմ վէրքին թափում,
Միշտ անխիղճ է ինչպէս մահ, չար մարդու լեզուն։

Ես ճամբորդ եմ, նա ճամբին կոյր բու է վայող,
Ա՜խ, ե՞րբ պիտի համրանայ չար մարդու լեզուն։

Ինչպէս փշոտ մի մացառ թող կեանքի արտից
Առ միշտ պոկուի, չքանայ չար մարդու լեզուն։

Միրահար չեմ անէծքի, բայց թող թոնիրում
Վառուի, այրուի, մոխրանայ չար մարդու լեզուն։

Ունենայի եթէ երբեք մի սուր մկրատ,
Կը կտրէի հենց հիմա չար մարդու լեզուն։

Երբ որ իմ այս երգը կարդայ, էլի իմ վրայ
Պիտի փրփրի, չարանայ չար մարդու լեզուն։

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ

digitised by A.R.A.R.@